Ագրիւրի յաւելուած

ՏԵՐ. ԵՔՈՆ № 282

Էույս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 17 կիրակի մայիսի 13 | տասնեւեւրկուերորդ տարի 1901

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ադրիւրի տարեկան գինը 3 րուբ. Տարազինը 6 ր.։
Адресъ: Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz

ԽՈՑՈՒՄ ՄԱՀԸ

(La jeune fille mourante)

Հեղ. ֆիկ. Ա. Սեզալա

«Ա՜խ, ինչ անեմ, որ անցնին՝ ինձ տանջող տենդն ու կրակ,
Այրում են ձեռներս, արիւնս հոսում է արագ.
Նեղւում եմ, չէ՞, զրկած ես ոյժերիցս առաջին
Մինչ, տեսնում եմ, դուք չաճախ ձեր ճակատը խոնարհած՝
Տխուր նայում էք գետնին և խորհրդաւոր ձայնով ցած՝
Մրմնջում էք իմ մասին։
Իմ մի թեթև աղմուկը, իմ հանած շունչը փոքրիկ՝
Խլում են ձեզնից ժպիտներ, մինչդեռ լալիս էք լուիկ.
Յոյց էք տալիս ձեզ ուրախ, սակայն հեծում էք գաղտնի,
Եվ չեմ տեսնում ձեր ճակտին նախկին բերկրանքն, այլ՝
Թախիծ,
Քոյրիկս էլ որ տեսնում է մօրըս արտասուքն ու կսկիծ,
Լալիս է մօտն իմ մահճիկ։

Այդ արտասուքներն ասացին ձեր գաղտնիքն ինձ սոսկալի,
Թէ կըմեռնիմ... մեռնել... ոհ, այդ ինչ մի՞թէ է պժգալի,
Մի՞թէ չըկայ, Տէր Աստուած, ոչ մի միջոց մահւան դէմ,
Ինչ, մի՞թէ մէկ օրւայ մէջ անշարժ մնալ ու սառչել,
Այսօր՝ յուսալ, վայելել, և չանկարծ վաղը կորչել
Խոկմունքներով իմ ամեն։

Նոր է դեռ այն հագուստը, որ հանդիսում ես վերջին
Հագել էի և դլխիս ժապաւէնները նրբին
Պահել են դեռ այն սիրուն, ակնապարար այն գոյները՝
Որք ապշեցնում էին ինձ իրանց փայլով գեղեցիկ,
Այն ինչ պէտք է ես ապրիմ աւելի քիչ քան նոյն իսկ
Իմ շղարշն ու շորերը։

Ձալջալուեցայ մի շնչից ես դիւրաբեկ տունկի պէս,
Մինչ ժպտում է, իմ քոյրեր, դեռ վարդագոյն ձեր երեսն
Եւ խանդավառ և՛ զւարթ. ոհ, երջանիկ էք դուք արդ.
Մինչ ես տժգոյն ու լքուած, խաւար պատել է աչերն...
Ո՞հ, սպիտակ մի արձան կարծէք լինիմ այժմ ես՝
Գերեզմանի իբրև զարդ։
Ապշում էին իմ վրայ. ես՝ զուր ստեր, ուրւականն,
Ջուրջ էր պատում ամբողն ինձ մատաղ թագուհու ճիշտ նման.
Իշխանութիւնս՝ համակ նոր՝ թւում էր երկար տևել դեռ,
Մի քանի շարք գոհարներ պճնում էին վեհ պատկերս
Եւ, իբրև պսակ գեղեցիկ, ճակտիս՝ տասնուրի տարիներս
Տալիս էին ճաճանչներ։

Ձեզ լինի արդ, իմ քոյրեր, այդ փողփողուն ապագան,
Ձեզ հաճոյքներն այդ բոլոր մի մատաղհաս աղջկան,
Ինչպէս նաև հարսնեկան մատանին ու դողդոջ բառն
Եւ հատիկներն նարնջի, շքեղ պսակը կոյսի,
Մինչ ինձ համար ոչ քող կայ, ոչ շրջագեստ նոր հարսի,
Այլ սպիտակ մի պատառ,—

Մի քարի տակ վէր ընկած լոկ մի գգեստ ցաւագին
Որով, մի նեղ դագաղում, ընդ միշտ թաղուած կըպահւին
Անհուն, անթիւ ցնորքներ՝ անուրջներով գեղանի,
Եւ որ կընկնի բզկտած՝ նախանձող ցուրտ հողի տակ՝
Առանց երբէք լսելու բաբախիւնները արագ
Երիտասարդ մի սրտի։

Բայց մի՞թէ ես կրմեռնիմ և մի երկար դագաղում
Զդայազուրկ վէր կընկնիմ... ոհ, դրան չեմ հաւատում.
Երբ ունի մարդ իր առաջ մի յուսալից ապագայ,
Երբ իր օրերն են ուրախ, երբ իր կեանքը թեթև է,
Ինքն էլ տասնուրի տարեկան, կարող ես, մայր, ասել թէ
Աշխարհումս մեռնիլ կայ։

Ուզում եմ ես վայելել դեռ բնութիւնը համայն,
Ե՛ւ ծաղիկը մարդերի, և առւակի քաղցրիկ ձայն.
Եւ երկինքը կապուտակ և սոխակի ելևէջ,
Կեանքն եմ ուզում ես սիրել, սիրել ամբողջ իմ հոգւով,
Տեսնել այդ կեանքն արեւում, տեսնել բոյսէ շողերով
Եւ շնչել նրան օդի մէջ»։

Միւս օրը տխուր զանգն ազօթքի կարդաց հրաւէր,
Փոմի դուռն ու սուրբ սեղանն լուսաւորում էին կերոններն
Իրանց տժգոյն լոյսերով. Երկչոները տիւրագին,
Մահւան երգն էին ասում, մինչ սուերի պէս սպիտակ
Կոյսերը մօտ դագաղին լալիս էին հեռաւակ՝
Կամարների տակ մթին։

Թարգմ. Ֆրանս. ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ.

—

Հա և վիճակագրական տեղեկութիւններ Գերմանիայի հայ ուսանողների մասին, որը ալատատում ենք յիշեալ Տեղեկագրից։

ԳԵՐՄԱՆԻԱ

1. Բեռլին [8])

թիւ	Ինչ հիմնարկութիւններից են եկած	Ինչ են սովորում	Ծննդավայր	Որքան սեմեստր են լսել
1	Ներս. դպր.	փիլիսոփ.	Վան	VI
2	Ռէալ. և Dr. philos.	բժշկ.	Զուշի	XII
3	Ռէալ.	քնագիտ.	Բագու	VI
4	Ռէալ. և իմ-ժին. ինստիտ.	մեքենա-յագիտ.	Զուշի	I
5	Գիմնազ. VII	Հասար. գ.	»	V
6	Առևտր. դպր.	» »	Ռոստով	I
7	Գիմնազ. VII	փիլիսոփ.	Զուշի	IV
8	» »	քիմիա	»	V
9	Լազ. ճեմ. VI	փիլիսոփ.	Ն. Նախիջ.	III
10	Թեմ. դպր.	քիմիա	Զուշի	III
11	Ռէալ. դպր. V	Հասար. գ.	»	I
12	Գիմնազ VIII	» »	Աստրախ.	III
13	Ձեմարան	երաժշտ.	Կուտինա	V
14	Գիմն. և բժշկ.	բժշկ.	Թիֆլիս	I
15	Ֆրանս. գիմն. (կոլէժ)	»	»	XI
16	Ռէալ.	քիմիա	Զուշի	?
17	»	պետական.	Գանձ. գ.	IV
18	» VI	բժշկ.	Ղրիմ	II
19	Ռէալ.	քիմիա	Զուշի	VII
20	»	Հանք. գ.	Մեղրի	V
21	»	բժշկ.	Հագրութ	II
22	Գիմնազ.	մեքենայ.	Թիֆլիս	?
23	Բերբեր. վարժ.	Հասար. գ.	Սամսոն	?
24	Ռէալ.	» »	Զուշի	?
25	Առևտր. դպրոց	» »	Ազուլիս	I
26	Ձեմարան	երաժշտ.	Պոդոլսկ	I

2. Բրեսլաւ

1	Ռէալ.	մատեմատ.	Ղրիմ	VIII

3. Դարմշտադտ

1	Ներս. դպ.	մեքենայ.	Բագու	I
2	» »	»	Ալեքսեևսկ	III
3	» »	»	Թիֆլիս	II
4	» »	»	Բագու	I
5	» »	»	»	դեռ չեն գրել
6	» »	»	Գորի	

4. Դրեզդեն

1	Ռէալ.	քիմիա	Ջամախի	VIII
2	»	»	Տրապիզոն	VIII

5. Լայպցիգ

1	Ձեմարան	աստուած.	Միծ-Ալ.	V
2	Կենտրոն. վարժ.	մանկավ.	Ակն	I
3	Ձեմարան	քնագիտ.	Վաղարշ.	II
4	»	լեզուագիտ.	Զուշի	V
5	Ներս. դպր.	բնագիտ.	Լոռի	I
6	» »	պատմութ.	Վան	VI
7	» »	Հասար. գ.	Գեօկչայ	V
8	Ռէալ.	քիմիա	Բագու	VIII
9	Գիմնազ	»	Թիֆլիս	I
10	Ռիգա (?)	»	Ջամախի	V
11	Ներսիս. դպր.	բժշկ.	Կարին	

6. Հալէ

1	Գէորգեան ճեմ.	աստուած.	Կիլիկիա	I
2	» »	»	Ղարախ	V
3	» »	քիմիա	Լոռի	I

7. Միւնհէն

1	Ռէալ.	մեքենայ.	Զուշի	XII
2	»	»	»	XIII
3	»	»	Թիֆլիս	III
4	»	»	Բագու	III
5	»	»	Ջամախի	III
6	»	»	»	I
7	»	գրական.	Պոլիս	XII
8	» IV դ.	նկարչութ.	Բագու	V

[8]) Հետևեալ ցուցակում գտնուղ համառօտութիւնների բացատրութիւնները.

Ներս. դպր.=Ներսիսեան դպրոց. Ռէալ. դպր.=Ռէալական դպրոց (աւարտած), Ռէալ. V=Ռէալական դպրոցի 5-որդ դասարանից, Ձեմարան=Գէորգեան ճեմ., Լազ. ճեմ.=Լազարեան ճ., Սանասար. վ.=Սանասարեան վարժարան (Էրզրում), Բերբերեան վ. և Կենդրոնակ. վ.=յայտնի վարժարաններ Պոլսում։ Փիլիսոփ.=փիլիսոփայութիւն, հասարակ. գ.=հասարակական գիտութիւններ։ Երբ գրած է, օրինակ. «Ռէալ. դպր. և Dr. philos.» նշանակում է, որ այդ ուսանողը համալսարանը աւարտելով ուսումնասիրում է մի նոր մասնագիտութիւն։

8. Фрайбург

1	Ռէալ.	Լեռն. գ.	Սիլեզիք	II
2	»	»	Զուբա	III
3	»	»	Ջանզեգ.	III

9. Ցճա

1	Ռէալ. և Dr. philos.	բժշկ.	Մեղրի	I

Ասելոյդ չենք համալսում տեղեկութիւններ բերել և Ցիւրիխի համալսարանում ուսանողների մասին, որովհետև գերմանական Զուէյցարիայի կինսական բոլոր պայմանները գրեթէ նոյնն են, ինչ որ և Գերմանիայում:

Ցիւրիխ

1	Ռէալ. դպր.	քիմիա	Բազու	XIV
2	» »	բժշկ.	Ջուշի	VII
3	Ասնասոպ. վ.	քիմիա	Սրաբկիր	V
4	» »	մեքենայ.	Կարին	I
5	Ռէալ. դպր.	քիմիա	Մադրասա	VI
6	» »	ֆիզիկա	Ջուշի	V
7	Մոսկ. Մեք. պ.	»	?	?

Վերը բերած տեղեկութիւններից կարող ենք արդէն հանել հետևեալ եզրակացութիւնները.

Գերմանիայի և Ցիւրիխի [9]) ուսանողներից 55 եկած են Ռուսիայից, իսկ 13 Ամերիկայից (մէկը անյայտ է). որանով ապացուցւում է արդէն սկզբից ասած ակնարկութիւնը, որ Տաճկահայերը խուսափում են Գերմանիայից. ուրեմն բացի ուրիշ ֆակտորներից, ինչպէս ռուսական միջնորդութիւնը և ուրիշ, գերմանական ազդեցութիւնը տարածւում է մեր ազգի վրայ անմիջապէս նաև ռուսահայկական ուսանողութեան միջոցով: Անհետաքրքիր չէ նոյնպէս տեսնել, թէ Գերմանիայի ուսանողութիւնը որտեղից է հոսում աւելի, կենդրոնական տեղերից թէ դաւառներից: Եթէ կարելի է ծննդավայրը մեծ մասով ընդունել նաև ինչպէս ուսանողի նախահամալսարանական կրթական միջանայր, որին պատկանում է և իր ընտանիքը, այն ժամանակ, համարելով Պոլիսը, Թիֆլիսը և Բազուն կենդրոններ, իսկ մնացած տեղերը—գաւառներ, կըստանանք. Թիֆլիսից և Բազուից եկած են 14 հոգի, (Ռոստովից—1) և Պոլսից—1, ընդհանուր=16, մինչդեռ գաւառներից, Կովկասեան—10, իսկ տաճկական—12 [10]), կամ մի-ասին 52: Այն հանդամանքը, որ Գերմանիա գնում են ուսանելու գլխաւորապէս գաւառացիք, բացատրելի է ինչպէս գաւառական ազգաբնակութեան գերակշռութեամբ, այնպէս և նրանով, որ գաւառացիք թէև ստանալով իրանց ուսումը յաճախ կենդրոններում, ուսանել են այնպիսի հիմնարկութիւններում, որտեղից ճանապարհ չըկայ կամ առհասարակ դէպի ռուսաց բարձրագոյն դպրոցները (օրինակ Ներսիսեան դպրոցից ու Գէորգեան ճեմարանից), կամ էլ—համալսարանը, օրինակ ռէալականից: Նոյնպէս շատ հասկանալի է, որ գաւառացիք գերապատում են այդպիսի դպրոցները: Լեզուի և պատմասութեան տեսակէտից նրանց համար աւելի դիւրին պիտի լինի մտնել մեր թեմական ու ռուս ռէալական դպրոցները, քան որևէ դիմնազիան: Բայց թողնենք քննել ցուցակը ծննդավայրի տեսակէտից. այլ տեսակի եզրակացութիւնները այստեղ շատ խախուտ պէտք է լինեն, որովհետև ծննդավայրը, նկատի ունենալով ժամանակը և ընտանիքի տեղական գոյութիւնը, շատ և շատ դէպքերում միմեանց չեն համապատասխանում և անշուշտ երկու վերջին հանդամանքները աւելի ուժեղ ֆակտորներ են, քան առաջինը:

Եթէ դասաւորենք ուսանողներին ըստ նախահամալսարանային դպրոցների, այսպիսի թուեր կըստանանք. աւարտած ռէալականներ 28 հոգի, Հայոց թեմ. դպրոցներ 12, Գէորգեան ճեմարան 8, չաւարտած դիմնազիականներ 4, Սանասարեան, կենդր. ու Բերբեռեան վարժարաններից 4, աւարտած դիմնազիականներից 3, չաւարտած ռէալ. 3, մնացած դպրոցներից 6, ընդամենը 68: Բաւական է աւարտած ռէալականների թիւին (28) աւելացնել աւարտած գիմնազիականների, Ներսիսեանների ու Գէորգեանների թիւերը (23), որպէսզի վերջնականապէս ցրել այն սխալ կարծիքը, իբր թէ Գերմանիա (կամ առաստահման) ուսանում են «զանազան անյայտներ» (ինչպէս ռուսներն ասում են «неудачники» [11]): Եթէ մինչև անդամ թոյլ տանք մեզ նայելու մեր հոգևոր միջնակարգ ուսումնարանների վրայ իբրև անյաջողութեան վկայութեան, ապա և այդ դէպքում ևս մեր ուսանողների մեծ մասը կըլինի ոչ թէ անյաջողներից, այլ ընդհակառակն, ամենալաւ աշակերտներից, որովհետև ամենալաւ աշակերտները միայն կարող են ընդունուիլ ռուսական բարձրագոյն դպրոցները:

[9]) Այսուհետև ասելով Գերմանիա, ի նկատի կունենանք և Ցիւրիխը:

[10]) Թէպէտ սրանցից բոլորն էլ սովորել են կամ Պոլսի վարժարաններում, կամ Կովկասի հայոց թեմական դպրոցներում, միայն երկու հոգի եկած են Սանասարեան դպրոցից (Երզրում):

[11]) Սա գուցէ ամենագլխաւոր եզրակացութիւնն է, որ մենք անում ենք:

րում աւարտած երիտասարդների վրայ, որպէս կենսական մրցման տեսակէտից ոյոշ չափով «անյաջողների» վրայ, այն ժամանակ ևս աւարտած ռէալականների ու գիմնազիականների ընդհանուր թիւը— 31 այնքան մեծ թիւ է, որ ստիպում է շատ կասկածամիտ լինել դէպի յիշեալ տարածուած կարծիքը. և վերջապէս պարզ երևում է, որ ուսում չաւարտողների թիւը Ց-ից բարձր չէ անցնում (ռէալ. 1, գիմն. 4, Լազար. ճեմ. 1)։

Ըստ մասնագիտութեան ուսանում են

բժշկութիւն . .	8	երաժշտութիւն . .	2
քիմիա	14	գրականութիւն. .	1
մեքենայագիտութ.	15	հասարակական գ.	7
հանքային գործ .	4	փիլիսոփայութիւն .	2
գիւղատնտեսութիւն	1	աստուածաբանութիւն	3
բնագիտութիւն. .	3	մաթեմատիկա . .	1
մանկավարժութիւն.	1	նկարչութիւն . .	1
ընդամենը	46	ֆիզիկա	2
		լեզուագիտութիւն .	1
		պատմութիւն . .	1
		ընդամենը	21

Եթէ առաջին սիւնը համարենք գործնական գիտութիւններ, իսկ երկրորդը — տեսական, կերևայ, որ մեր գերման ուսանողներից աւելի քան $^2/_3$ նւիրուած է գործնական մասնագիտութիւններին։ Որոշելու համար, թէ որքան դա ընդհանուր կամ արտակարգ երևոյթ է, հարկաւոր է այդ թիւերը համեմատել ռուսաց համալսարաններում և բարձրագոյն դպրոցներում ինչպէս հայ, այնպէս և ռուս ուսանողների թիւերի հետ։ Այդպիսի տեղեկութիւններ, չունենք։ Յամենայն դէպս կարելի է ասել. թէպէտ հաւանական է, որ մեր ուսանողութիւնը արտասահմանում աւելի է նւիրուած տեսական գիտութիւններին քան Ռուսիայում, այնուամենայնիւ, ինչպէս թիւերը ապացուցանում են ($^2/_3$ ս. $^1/_3$) ոչ այն չափով, ինչպէս հաւատացնում է այդ կէտի վերաբերմամբ տիրող կարծիքը։

Գ. Մկիճ-Կարապետեան

(Կըշարունակի)

Վ. Գ. ԲԷԼԻՆՍԿԻ ԱԶԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

II

1837 թվի վերջերում Բէլինսկին արդէն գտնում էր Հեգելի փիլիսոփայութեան ուժեղ ազդեցութեան տակ։ Ճատ բնորոշ է Ստանկևիչին գրած նրա նամակը, որի մէջ արտայայտում է նրա ամբողջ ոգևորութիւնը, ամմողջ հիացումը այդ փիլիսոփայութեամբ։ «Կովկասից գալիս եմ Մոսկւա. գալիս է և Բակունինը։ Մենք ապրում ենք միասին։ Ամառը նա ձէքի անցկացրեց Հեգելի կրօնի և իրաւունքի փիլիսոփայութիւնը։ Մեր առաջ մի նոր աշխարհ բացուեց։ Այ՛ը — իրաւունք է, իսկ իրաւունքը — ոյժ. ոչ, անկարող եմ նկարագրել, թէ ինչպիսի ըգպացմունքով լսեցի այդ խօսքերը.—դա ապատութիւն էր։ Ես հասկացայ, որ չըկայ եսակի նիւթական ոյժ, չըկայ և սիրնի տիրապետութիւն, չըկայ կամայականութիւն, չըկայ պատահականութիւն—և վերջապէս իմ խրնամատարութիւնը մարդկութեան մասին, և հայրենիքի նշանակութիւնը բոլորովին այլ կերպ պատկերացաւ իմ աչքին... Դեռ դրանից առաջ Կաւկովը կարդացած չափ հաղորդեց Էստետիկայի մի քանի հիմունքները. ես այդ ըմբռնեցի ինչպէս կարող էի։ Աստուած իմ. ինչպիսի նոր, պայծառ, անսահման աշխարհ. «իրականութիւն» բառը ինձ համար «Աստուած» բառին համանիշ դարձաւ։ Եւ դու լսում ես ինձ խորհուրդ տալիս խոհանոցային իրականութեան մէջ չընկնելու համար դիտել կապոյտ երկինքը—անսահմանութեան պատկերը. իմ բարեկամ—երանի նրան, ով կարող է երկնային պատկերում նշմարել անսահմանութեան նշանացոյցը։ Բայց չէ՞ որ երկինքը յաճախ ծածկւում է մռայլ ամպերով, ուրեմն երանի նրան, ով կարող է խոհանոցն էլ լուսաւորել անսահմանութեան մտքով»։ [1])

Մեզ յայտնի է, որ փիլիսոփայական շրջանում Բէլինսկին երկու հակադիրներից—վերացական գաղափար և իրականութիւն—երկրորդը հաւասարեց գրօյի, իսկ առաջինը խելագիտ և դրական յայտարարեց։

Այժմ նա բոլորովին հակառակն է անում. վերացական գաղափարը հաւասարեցնում է գրօյի, իսկ իրականութիւնը յայտարարում է իբրև բացած այդ հմարտութիւն։ «Ես նայում եմ ինձ համար մի ժամանակ այնպէս ատելի իրականութեան վրայ և դողդողում եմ, ըմբռնելով նրա խելացիութիւնը, տեսնելով որ նրանից ոչինչ չի կարելի ոչ պարսաւել և ոչ մերժել։ Իրականութիւն, պնդում եմ ես գիշերը քուն մտնելիս և առաւօտն արթնանալիս։ Եւ իրականութիւնը շրջապատում է ինձ և ըգգում եմ նրա ազդեցութիւնը ամենուրեք և ամենի մէջ։ Մինչև անգամ իմ մէջ — այս նոր փոփոխութեան ընթացքում, որը օրէցօր աւելի ու աւելի նկատելի է դառնում։

Ահա այդ կերպ Բէլինսկին կատարելապէս հաշտւում է իրականութեան հետ։

Սակայն ինչումն էր կայանում այդ հաշտութիւնը։ Մի՞թէ, ինչպէս սովորաբար հասկացւում է, նա պահապան ու պաշտպան էր դոյութիւն ունեցող կարգերին։

Ո՛չ և ահա թէ ինչու։

Յայտնի է, որ մեծն Պետրոսի անձնաւորութիւնը շատ դուր էր գալիս Բէլինսկուն. ահա թէ նրա մասին ինչ է գրում. «Բոլոր ազգերի թագաւորները, անցեալը,

[1]) Ibid. եր. 225—226.

աւանդականը հիմք ընդունելով, զարգացրել են իրանց հայեացքները: Պետրոսը Թուսլաւ խոսեց իր աճցեալից, կոռծանեց նրա աւանդութիւնը» [1]:

Ձորտական դրութեան մասին նա այն կարծիքի է, որ «կոռավարութիւնը քայլ առ քայլ ազատում է նրանց», իսկ ազնւականութիւնը «աճեցնում է ինքնըստ ինքեան առանց մի որևէ յեղափոխութեան կամ ներքին դրժտութեան» [2]:

Պարզ է, որ եթէ Բէլինսկին պահպանողական լինէր, այդպիսի կարծիք չէր յայտնի ազնւականութեան մասին: Եւ իսկապէս ազնւականութիւնը տիրապետող դասակարգն էր, որ պահպանում էր գոյութիւն ունեցող կարգերը:

Իսկ Բէլինսկին ոչ միայն չէր պաշտպանում այդ կարգերը, այլ պահանջում էր, որ մարդիկ դիտեն իրականութիւնը աւելի լուրջ, աւելի ուշիմ կերպով. «լուսաբանեն, ըմբռնեն նրա դրութիւնը, որպէսզի հնարաւոր լինի աչալուրջ լինել, հինեաւոր գործել:

Հետևապէս այդ բոլորը ուղղած էր այն մարդկանց հասցէին, որոնք կամ չափազանց գաղափարականացնում էին իրականութիւնը՝ նրա բացասական կողմերը տեսնել չուզենալով, կամ բացասում էին առանց նրան ըմբռնելու:

Առաջին կարգին անշուշտ պատկանում են պահպանողականները, իսկ երկրորդ կարգին-վերացական մըտածողները, որոնք հակառակ են րէալ ուղղութեան:

«Իրականութիւնը—ասում է Բէլինսկին—երկաթէ ճնշօներով և ճանկերով զինաւորած մի հրէշ է, որը չօժարակամ անձնատուր չըլինողին բռնութեամբ է կըլանում: Մէկն իր ամբողջ կեանքում երեւակայում ու փայփայում է մի երկնային կնոջ, իսկ ամուսնանում է մի ինչ որ փալասի հետ: Մէկն իր ամբողջ կեանքում փայփայում էր հասարակութեան բարեկեցութիւնը, իսկ յետոյ հանգիստ սրտով մի փափուկ պաշտօն դտնելով կաշառք է վերցնում.»

Ուրեմն ինչ պէտք է անել, որ իրականութիւնը չըփոփոխէ, չըկլանէ մարդու ձգտումները: «Նրանից (իրականութիւնից) ազատելու և սարսափելի հրէշի փոխարէն երանելի բարեկեցութեան աղբիւր տեսնելու համար միայն մի միջոց կայ—այն է ըմբռնել նրան:»

Իսկ ինչպէս ըմբռնել նրան: «Իրականութեան ըմբռնումը պարունակում է մի ինչ որ բնազդի, տակտի մէջ, որոնց շնորհիւ մարդկային ամեն մի քայլը ուղիղ է, ամեն մի դրութիւնը ճշմարիտ է, բոլոր յարաբերութիւնները անսխալ և անկեղծ են... [3]

Թէև այստեղ Բէլինսկին բաւական մութ կերպով է պատասխանում հարցին, սակայն դժւար չէ հասկանալ, որ իրականութիւնը ըմբռնելու համար անհրաժեշտ է առարկայական (объективный) մեթոդ, առանց սուբյեկտիվական միակողմութեան: Այդ միտքը նա աւելի յետոյ աւելի որոշ արտայայտում է էստետիկայի մասին ունեցած իր հայեացքով...

Բէլինսկու մտաւոր զարգացման հեգելական շրջանը լաւ ըմբռնելու համար, անհրաժեշտ է գէթ համառօտակի ծանօթանալ Հեգելի փիլիսոփայութեան հետ:

«Այն ժամանակ Մոսկւայում—ասում է Ի. Ս. Տուրգենևը—մեծ ազմուկ բարձրացրեց Հեգելի յայտնի ասացուածքը թէ «ինչ որ խելացի է—իրական է. ինչ որ իրական է՝ խելացի է:» Դրա առաջին մասն հետ բոլորը համաձայն էին. բայց ինչպէս պէտք էր հասկանալ երկրորդը: Միթէ պէտք էր ընդունել, որ այդ ժամանակ Ռուսլայում գոյութիւն ունեցող բոլոր կարգերը խելացի էին...» Եթէ մեկը—շարունակում է Տուրգենևը—ներիտասարդ փիլիսոփաների ականջին շշնջար, թէ Հեգելը խելացի է համարում ոչ բոլոր իրականութիւնը—այն ժամանակ կարելի կըլինէր շատ տանջալի ջան ու ճիգ, շատ ժամանակ խնայել:» [1]

Եւ իսկապէս, Հեգելը իրական էր համարում միայն այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր, իսկ բոլոր պատահականութիւնները մի կողմ էր թողնում: Նա ասում է. «իրականութիւնը իր զարգացմամբ ներկայանում է ինչպէս անհրաժեշտութիւն» և աւելացնում է, որ «ամեն մի միջոց, ձեռնարկութիւն, օրինակ մի որևէ հարկադրութիւն, երբէք չի կարող «իրականութիւն» համարուել առանց սահմանափակումների:»

Բայց ինչ որ անհրաժեշտ է, իրական է նոյն չափով, ինչ չափով անհրաժեշտ է: Խելացիութիւնն անհրաժեշտութեան ամենաբարձր աստիճանն է և նա պարունակում է իրականութեան մէջ նոյնքան, որքան անհրաժեշտ է: Իրականութիւնն անպատճառ պիտի համակերպուի իրերի բնոյթի հետ և ունենայ անպայման, մըշտական անհրաժեշտութիւն, հետևապէս խելացիութիւն: Նա կարող է պայմանաւորելու կողմնակի, պատահական հանգամանքներով, առաջանալ նրանից իբրև անհրաժեշտութիւն: Հետևապէս այդ խելացիութիւնը ժամանակաւոր, պայմանական է, ուրեմն և փոխոխական:

Իսկապէս համաշխարհային ոգին իր զարգացմամբ փոփոխում է իրականութիւնը, ոչնչացնում է նրա բովանդակութիւնը և իբրև անհրաժեշտութիւն, ուրեմն և խելացիութիւն հրատարակում նորը:

Ա. ՋՈՒՐԱԲԵԱՆ

(Կըշարունակուի)

[1]) Тургеневъ соч. Ընդգծումը մերն է:

[1]) Ընդգծումը մերն է:
[2]) Ընդգծումը մերն է:
[3]) Пып. т. I с. 321

Գրականութիւն եւ մամուլ

—

Քանանեան ժողովածու եւ Կուսիկով։ —Հանդէս Ամսօրեայ եւ Բազմավէպ։

—

*** «Նոր-Դարի» մէջ կարդում ենք մի հետաքրքրիր նամակ։ Ընթերցողը գուցէ պիտէ, որ մի քանի պարոններ, ի թիւս որոնց և պ. Կուսիկով, ձեռնարկել են հրատարակելու մի ժողովածու Մոսկուայում, նուիրած Լազ. Ճեմարանի ուսուցիչ Գ. Քանանովի գործունէութեանը։ Եւ ահա «Նոր-Դարի» մէջ պ. Բարխուդարեանը ինչ է ասում այդ մասին.

„Յիշում է պ. Կուսիկովը, որ ուսանողութեան ժամանակ ինձ նամակներ ուղի գրած հանգուցեալ Քանանովի մասին ձայը ու ծանակով, հայհոյանքով լիշա է, այդ նամակները գրած են 80 ական թուականներին և բարեբախտաբար նրանք պահւած են, բայց չէ որ ուշադրութեան արժանի են հէնց այն ժամանակի գրածները. եթէ փոքր ի շատէ ազնւագոյն դաղափարներ, մաքուր ձգտումներ կամ որև է իդէալ ունէինք—ունէինք այն ժամանակ։ Ինչ եղաւ, հարցնում ենք, որ նոյն Կուսիկով պարոնն այսօր աշխատում է իր այլանաձ մարդու, պարապաձ մարդու յիշատակը յաւերժացնել“։

Պ. Բարխուդարեանը ցոյց է տալիս, որ բաւական միամիտ հարցեր տալ պիտէ։ Բայց շատ պարզ է այդ «ինչ եղաւ» պատասխանը, երբ մարդ տեղեկութիւն ունենայ փորր ինչ, թէ ով է այդ Կուսիկով։ Այդ այն Կուսիկովն է, որ թունդ երկրպագու Ս. Ջահակիկին, այժմ աչ ու ահեակ ցեխոտում է նրան, որովհետև, ըստ իմաստուրբերէն առածի «Ապա դէյիր սիւր դեարիա—սիւր դեարիա»։

—Աղան ասում է՝ քշիր ձորը, ուրեմն քշիր ձորը»։ Առաջին օրինակը չէ, որ մեր ինտելլիգենտները ըստ հրամանի աղաների՝ իրանց միտքն ու սիրտը քշում են դէպի ձորը...

—

***«Բազմավէպը» սկսել է առաջնորդող յօդուածները գրել։ Բայց հետաքրքիրն այն է, որ այդ յօդուածների մէջ, օրինակ № 5-ում, որ «Մեր ճեռկան» վերնագիրն ունի, դարձեալ չէ մոռանում անտեղի և չաճախ ծիծաղելի ածականներ շռայլել այնպիսի անձանց, որոնք երևի կ'ուրախանան, եթէ իմանան որ այդպէս շռայլ են իրանց վերաբերմամբ։ «Փաղաւարի մարդ»—դա մի պարոնի է ուղղած, որն իր կեանքում «դաղափարի» ինչ լինելը չէ գիտցել։ «Ուռաջնորդող գրչի տեր»՝ ուղղած է մի անհամ կոմպիլատորի, և «կորովամիտ» ածականը այնպիսի անձի, որ «կորովամտութեան» մասին գաղափար չէ ունեցել։ Բայց «շողոքորդիր—շողոքորդենք“...

Այդ բոլորով հանդերձ, առաջնորդողի մէջ կան ճշդրիտ պատկերացումներ, մանաւանդ երբ դրողը մասնաւորելու հարկից վարպետութեամբ ազատւել գիտէ, խօսքը ընդհանրացնելով։

„... Մի ուրիշ տեղ—ասում է Բազմավէպը—լրագրութիւնը կամ դրականութիւնը՝ կարելի չէ գանագանել նպարավաճառութենէն“—այդ խօսքերը, ըստ երևոյթին, ուղղած են թիւրբահայ թերթերին և գրականութեան։ Բայց անարդար չեն խօսքերը, եթէ ի նկատ առնենք այդ թերթերի պայմանները։

„Գրական ասպարէզը—շարունակում է յօդուածագիրը—մի տեղ միայն (շեշտում ենք բառերը) ազատամիտ և ուղղամիտ տիրապետութեան ենթարկւեցաւ։ Այս յաղթանակը ուրախութեամբ պիտի ողջունէր, եթէ այդ գործիչներու մէջ անձնական ներ՝ խոպոտ ու գոռոզ խշտոց մը և վզտոց մը չի շէր։ բայց զարմանք չէ. վասն զի մեր մէջ գիտութիւնը համեստութեան հետ շատ հիւ անգամ կրնթանայ“։ Այս վերջին բառերը եթէ գարձնենք՝ լինում է „տգիտութիւնը կընթանայ անհամեստութեան հետ“... Արդեօք որ թերթի ականջը պիտի կանչի, երբ այս խօսքերը կարդայ։

«Մուրճի» նոր շրջանի մասին խօսելով, Բազմավէպը ասում է.

„Մուրճը, որ դարուս սկզբէն կերպարանափոխեալ լոյս կրտեսնէ, և անոր մէջ խմբուած են առաջահայ հասեus ու եսասլաես... գրագիտաց մտաւորական արդիւնքները“...

Հասեus եւ եսասլաես բառեր են, որոնց վրայ պէտք է նոր „Մուրճը“ խորհէ քիչ։

*** Լոյս տեսաւ „Հանդէս Ամսօրեայի“ թիւ 3–4։ Հանասիրական յօդուածներից յետոյ կայ մի մատենախօսական, որ միջին դարն է յիշեցնում։ Քննադատում է դաւրնելիզմը և պիտի կարդալ թէ որպիսի կատաղութեամբ ճգնում է բարեր նետել այդ հսկայական վարպետութեան հասցէին։ Ո՛ն, վերապատուելի հայեր, ձեր իսկ խօսքերով կարելի է ձեր երկար պարսաւագրին պատասխանել... „Պ. Քննադատին դաւրինականութեան մասին ըրած պատասխանին ինչ աստիճանի արժէք ունենալն մենք չենք շօշափեր — de quistibus non est disputatio“... Այդ խօսքերը հակադարձ շարժմամբ պատասխանելէս ձեր երկար քարոզների պատասխանը կարելի է համարել. քարոզներ, որոնք, սկսած Ս. Օգոստինոսից մինչև անցեալ դարի կէսերը հատորներ են լցրել և որոնց սակայն կարդայիլ են... շատ բերը և այն էլ միմիայն ծիծաղելու համար։ Մենք չենք ծիծաղում ձեր մատենախօսութեան վրայ, սակայն դուք էլ հասկացէք, որ դիտութիւնը ոչ մերժում է «Ab Fove Principium» և ոչ էլ ընդունում, որովհետև չըգիտէ։

—

Մատենախօսութիւն

—

О нѣкоторыхъ названіяхъ древней Арменіи въ связи съ данными ванскихъ надписей. Г. Халатьянца.

Յայտնի է, որ մեր երկրի հին-հայկական համարեա աշխարհագրական անուններից շատերի ծագումն ու նշանակութիւնը լեզուաբանութիւնը չի բացատրած. Այրարատ, Վան, Մուշ, Արածանի, Հանծիթ, Արաքս, Մասուրեան և այլն, յայտնի չէ թէ ինչ են նշանակում։ Բևեռագրերի ընթերցումը, որ վերջին տասն տարում մեծ առաջադիմութիւն արաւ, մի պարմանալի լոյս է սփռում այս կէտի վրայ։ Այս բրոշիւրի մէջ պ. Խալաթեան մի ոչ անաջող փորձ է անում ցոյց տալու, որ այդ և նման անուններից շատերը հայերէն չեն, այլ ուրարտերէն։ Մի լեզու, որ խօսում էր Հայաստանում մինչև VII դ. Ք. Ծ. ա., որով գրած են բևեռագրերը։ Այնպէս

որ հայերն այդ անունները ժառանգել են հայատառ հատատուելուց յետոյ նրա հին բնիկներից։

—

Этюды по Армянской діалектологіи Левона Мсеріанца. Пр.-доц. Имп. Моск. Университета. Ч. I. Сравнительная морфологія мушскаго діалекта въ связи съ морфологіей грабара и среднеармянскаго. Москва. 1901.

Այսպիսանի հռչակաւոր Փինական բերականութիւնից յետոյ սա կարծեմ, առաջին աշխատութիւնն է, որ մեր լեզուի այս կամ այն երևոյթը բացատրելու համար ի նկատի է առնուած այդ լեզուն ամբողջապէս. գրաբարը, միջնադարեան ամկօրէնը և ներկայի բարբառներից շատերը։ Այս գիրքը նւիրուած է Մշու բարբառի համեմատական ուսումնասիրութեան և զուտ մասնագիտական մի գործ է, կազմած Բրուգմանի յայտնի Grundrirs-ի ձևով։ Հեղինակն ի նկատի է ունեցել նիւթին վերաբերեալ գրականութիւնն ամբողջովին և մեր բարբառագիտութեան համար իր տեսակի մէջ գրեթէ հազւագիւտ մի աշխատութիւն է։

«Տարազի» խմբագրութիւնը տարաբախտաբար չէ ստացած այդ գրքից։

Գ. Վ.

—

Մեր հաղաքային ընտրութիւնների նախօրեակին

—

Ամսոյս 29-ին լինելու է տեղիս քաղաքային վարչութեան իրաւասուների ընտրութիւնը։ Անցած չորս տարին այն օրից, երբ մեր քաղաքը բախտ ունեցաւ «ինքնավարական» վարչութիւն ունենալու և ազատուելու ոստիկանական անկարգ կառավարութիւնից։ Այդ օրը 1897 թւի յուլիսի 31-ին էր, երբ առաջին անգամ հանդիսաւոր կերպով բացուեց վարչութեան գործունէութիւնը։ Իրաւասուների առաջին ընտրութիւնը կատարուեց 1896 թւի նոյեմբերի 24-ին և 25-ին, երբ ընտրուեցին 35 իրաւասուներ և 8 հանդիսատուներ. այն ժամանակ ընտրողները 163 հոգի էին, չընայելով բազմաթիւ կրզբնական ցուցակը 384 հոգուց էր բաղկացած,—բայց շատերը չկարողացան օգտուել իրանց իրաւունքներից։ Քաղաքագլխի և վարչութեան անդամների ընտրութիւնը կայացաւ 1897 թւի մարտի 2-ին։ Թէ իրաւասուների և թէ քաղաքագլխի ու անդամների ընտրութիւնը—համաձայն քաղաքային կանոնադրութեան — չորս տարով է, և ահա այդ չորս տարին անցաւ։ Մենք կոչւում ենք երկրորդ ընտրութիւն անել—և այդ ընտրութիւնը ինչպէս վերևը յիշեցի, լինելու է ամսոյս 29-ին։ Այս անգամ այ ընտրողական սկզբնական ցուցակը 538 հոգուց է բաղկացած.—անկասկած, սքրանք բոլորը չեն կարողանալ ընտրութիւններին մասնակցել,—բայց որքան էլ որ մասնակցեն,—մեր քաղաքացուն վիճակուած է այս անգամ ընտրել 44 իրաւասուներ և գոնէ 6 կանդիտատներ.—այդ պատճառով ներկայումս մենք աչքի առաջ ենք ունենալու գոնէ 50 կանդիտատներ —իրաւասուներ ընտրելու համար, ինչպէս և յայտնարարուած է քաղաքային վարչութեան կողմից։ Ինչ արաւ ներկայ քաղաքային վարչութիւնը և նրա նախագահ պ. քաղաքագլուխը, այդ մասին հետևեալ անգամին մանրամասն կանգ կառնեմ,—միայն այժմ ասեմ, որ քաղաքային ինքնավարական ձևը—մի գանձ է ժողովրդի բարօրութեան համար, մի լոմաստան օրէնդրութիւն, որից պէտք է օգտուել։—և ահա ասպարէզ. նրանք, որոնք կոչուած են ժողովրդին բարիք անելու, որոնք կամենում են ժողովրդական շահը պաշտպանել և օգուտ տալ նրան, չօշափելի օգուտ, թող հանդէս գան. բարութեան, ճշմարտութեան և խղճի զգացմունքով տարուած, թող հանդէս գան և իրանց քէչն գցեն նրան, ով ճշմարիտ է, անաչառ է և առաքինի. ով հասարակական շահերը միշտ բարձր է դասում անհատական շահերից, ով կոչւում ունի ծառայելու իր ծննդավայրին, իր հայրենի քաղաքին անձնւէր կերպով։ Գործի մարդիկ, գործին նպաստող մարդիկ—քաղաքին և քաղաքացուն սրտացաւ և բարեկամ մարդիկ (չ ագգականի մտքով հասկանալ ի հարկէ բարեկամ բառը) են հարկաւոր և «պատրաստ հարսանեաց տունը մտնելու», ինչպէս ասած է ս. գրքի մէջ։ Մեծ յոյս ունենք, որ մեր քաղաքացին, ինչպէս որ մինչև հիմա իր քաղաքի գործը կանոնաւոր և յաջող տարել է, այնպէս էլ ապագայում կըշարունակէ միշտ քաղաքի և քաղաքացու, այնպէս և ընդհանուրի շահերին լինելով ջատագով, և անելով սրա համեմատ ընտրութիւններ։ Հետևեալ անգամ կրճանօթացնենք ընթերցողներին, մեր ներկայ վարչութեան գործունէութեան հետ։

Ալէքսանդրապոլ Berberis Ե.
9 մայիսի

—

ՄԱՀՈՂ ԺԱՄԵՐ

—

—Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գալիցինը իր ամուսնի իշխանուհի Մարիա Գէորգիևնայի հետ քարեհաճել է աւետարանական — լիւտերանական տեղի անգլիացոց ընծայել 200 ր.

—Արդէն հաստատուած է «Թիֆլիսի զորձակատարներին փոխադրձաբար օգնող ընկերութեան» կանոնադրութիւնը։ Ընկերութեան գործառնութիւնները կըսկսուեն ձայնի վերջից։

—Արքունական բանկը հրամայել է դարձ տալ այսուհետև քսան և հինգ կոպէկանոցներ։

—Լրագրները յայտնում են, որ վերջին տիրոմսին 200 հազարը տարել է գրաւ գրած բիլետով օր. Վասիլչան, որ Պետերբուրգում արհեստաւոր է։

—Թիֆլիսի գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդեսում աշխատասիրութեան և գեղեցկագործութեան վիրաբերեալ տեղական էկսպոնատները բաժանելու են դաս դաս և ցանկալի է ճանաչուած ունենալ հետևեալ դասակարգութիւնը. 1) գեղինը մշակելու համար գործադրող բոլոր գործիքները։ 2) Պրազատուութեան դրութեան համար վազերի տեսակները (5 տարեկանից մինչև 10 տար. հասակի) տեղւոյն սովորական եղած վազերը կարելու ձևերի հետ. 3) ցքի մէջ գրած վազերի հիւանդացած մասերը, նշանակելով և հիւանդութիւնների տեղական անուններ։ 4) Բոլոր այդիներին վնասող մրջուները ցքի մէջ գրած, նրանց տեղական անուններ և տւած վնասը և «պատրաստ հարսանեաց տունը մտնելու», ինչպէս ասած է ս. գրքի մէջ։ Մեծ յոյս ունենք, որ մեր քաղաքացին, ինչպէս որ մինչև հիմա իր քաղաքի գործը կանոնաւոր և յաջող տարել է, այնպէս էլ ապագայում կըշարունակէ միշտ քաղաքի և քաղաքացու, այնպէս և ընդհանուրի շահերին լինելով ջատագով, և անելով սրա համեմատ ընտրութիւններ։ Հետևեալ անգամ կրճանօթացնենք ընթերցողներին, մեր ներկայ վարչութեան գործունէութեան հետ։

Ալէքսանդրապոլ Berberis Ե.
9 մայիսի

—

ՄԱՀՈՂ ԺԱՄԵՐ

—

—Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գալիցինը իր ամուսնի իշխանուհի Մարիա Գէորգիևնայի հետ քարեհաճել է աւետարանական — լիւտերանական տեղի անգլիացոց ընծայել 200 ր.

—Արդէն հաստատուած է «Թիֆլիսի զորձակատարներին փոխադրձաբար օգնող ընկերութեան» կանոնադրութիւնը։ Ընկերութեան գործառնութիւնները կըսկսուեն ձայնի վերջից։

—Արքունական բանկը հրամայել է դարձ տալ այսուհետև քսան և հինգ կոպէկանոցներ։

—Լրագրները յայտնում են, որ վերջին տիրոմսին 200 հազարը տարել է գրաւ գրած բիլետով օր. Վասիլչան, որ Պետերբուրգում արհեստաւոր է։

—Թիֆլիսի գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդեսում աշխատասիրութեան և գեղեցկագործութեան վիրաբերեալ տեղական էկսպոնատները բաժանելու են դաս դաս և ցանկալի է ճանաչուած ունենալ հետևեալ դասակարգութիւնը. 1) գեղինը մշակելու համար գործադրող բոլոր գործիքները։ 2) Պրազատուութեան դրութեան համար վազերի տեսակները (5 տարեկանից մինչև 10 տար. հասակի) տեղւոյն սովորական եղած վազերը կարելու ձևերի հետ. 3) ցքի մէջ գրած վազերի հիւանդացած մասերը, նշանակելով և հիւանդութիւնների տեղական անուններ։ 4) Բոլոր այդիներին վնասող մրջուները ցքի մէջ գրած, նրանց տեղական անուններ և տւած վ-

նախ օրինակը։ Այգիները բժշկելու համար գործադրուող նիւթերը և գործիքները։ 6) Խաղողը թարմ և կոնսերւի ձեւով, գլխաւորապէս ի նկատի առնելով նրանց վաճառաշահական կողմը։ 7) Գինի պատրաստելու և պահելու համար գործադրուող բոլոր գործիքները և կարասիները։ 8) Զանազան գինիների տեսակները շիշերի մէջ լցրած։ Կարեւոր է համարւում, որ եթէ մի տեղ Հիսպոնատները խմբովին են ներկայացուում, նրան կցել այդ երկրի այգեպանութեան և գինեգործութեան, գոնեա, ընդհանուր տնտեսական նկարագրութիւնը։

—Մի քանի ժամանակ առաջ Օշչևսկի և Զարանովսկի ճարտարապետները անգլիացի Ռիլսոնի հետ խնդրամտոյց էին եղել Փինանսների մինիստրին՝ թոյլ տալ իրանց փորելու և օգտւելու Սև ու Կասպեան ծովերը մլսցնող ջրանցքով։ Ներկայումս Փինանսների մինիստրը այդ ծրագիրը քննելուց յետոյ ուղղել է նրան հաղորդակցութիւնների մինիստրութեանը վերջնական կարծիք յայտնելու համար։ Ինչպէս երեւում է, այդ գործը ձեռնարկող պարոնների ներկայացրած տեղեկութիւններից և մեկնութիւններից հաշւած է, որ նախագծած ջրանցքով պէտք է տեղափոխւի տարեկան մօտ 450,000,000 միլիօն փութ ծանրութիւն։ Ջրանցքի կազմակերպութիւնը կրնստի ընկերութեան վրայ 300 միլ. րուբլի Ամբողջ ջրանցքը կունենայ մօտաւորապէս 550 վերստ երկարութիւն։

—Առաջիկայ Կովկասեան գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդեսի ծրագրերը թարգմանւած է ռուսերէնից և տպւած են տեղական և ֆրանսերէն լեզուներով։

—Նոյն ցուցահանդեսի կարգադրիչ մասնախումբը գիմել է քաղաքիս գլխաւոր բոլոր օտարերկրեայ հիւպատոսներին և խնդրել է նրանց աջակցութիւնը, որ ցուցահանդեսի մէջ մասնակցեն օտարերկրեայ մեքենայագործ ֆիրմաներ, ուղարկելով երկրագործական մեքենաներ։

—Թիֆլիսի 3-դ 200,000 ր. փոխառութեան համար բացւած սուորագրութիւնը վերջացել է և ինչպէս լսում ենք, սուորագրել են այդ գումարից մօտ 4000 ր. աւելի։

—„Кав.“ մէջ կարդում ենք, թէ Հալաքարի և Նաթլուղի բնակիչները կրկնել են իրանց խնդիրը քաղաքային վարչութեան՝ շտապեցնելու Հալաքար-Նաթլուղի ձիաքարշ գծերը շինելու գործը։

—Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւնը կազմակերպում է Մուշտաիդում հասարակական ղեկավարութիւն բարեգործական նպատակով, որ տեղի է ունենալու մայիսի 20 և 21-ին, իսկ եթէ եղանակը անբարեացին լինի, մայիսի 27 և 28-ին։

—Հինգշաբթի, ամսոյս 17-ին, վրաց աղնուականների թատրոնում դերասան պ. Անդրանիկ, խաղալու է Զիլլերի „Ազատականը“։

Դպրոցական

Ներկայ տարւայ օպոստոս ամսին, ինչպէս յայտնում է «Рус. Вѣд.»-ը, Ռուսիայի զանազան կողմերում կընշանակեն զանազան տեղեակ անձինքներ, որոնք պէտք է տեղական ուսումնարանական վարչութիւնների հետ խորհրդակցեն առաջիկայ միջնակարգ և բարձր. ուսումնարանների բարեփոխութեան հարցերի մասին։

Խառն լուրեր

Կ. Պոլսում, պոստայինն հարցի պատճառով ծագած վէճը, վերջացած կարելի է համարել։ Սուլթանը հրամայել է վերականգնել առաջւայ դրութիւնը և դեսպաններին վճռական խոստում է տրել այլ ևս չըխառնւել օտարերկրեայ պոստատների գործերին։ Իսկ թէ դեսպանատները մեծ պահանջ են յայտնել, այդ բանի համար հապիւ կառավարութիւնները իրանց համաձայնութիւնը տան։

— Զինաստանում գործերը նոյն կարգով շարունակւում են. եւրոպական զօրքերի յարձակումների հետ զուգընթացաբար գնում է և վարձատրութեան հարցի մասին բանակցութիւնը։ Ֆրանսիական դեսպանը մեկնել է Պեկինից։

—Անգլիական կիւնօրները Հարաւ. Ափրիկայից եկած նամակներում գանգատւում են իրանց գրութիւնից և Էպիդեմիայից (ժանտախտ)։ Ռոթշայի կինը հրաւիրւած է Լոնդոն, երևի բանակցութեան մասին։ Իբրև թէ Կիտչիները յայտնել է Լոնդոնի կառավարութեան, թէ պարտիզանական կռիւը շարունակելու համար առանց նոր զօրքեր ուղարկելու—անպատուղ կըլինի։ Բօէրները նորից խուժել են Կապի գաղութը. նրանց թիւը պաշտօնապէս հաշւած է 800 հոգի։ Բօէրների գլխաւոր ոյժերը կենդրոնացած են Ջուբլան լեռներում. նրանց թիւը 1,000 կամ 1,500 է։ Լսւում է, որ Դէ Էան է նրանց հրամանատարը, սակայն առ այժմ դա չէ ճշտւում։ Ապրիլին բօէրների կորուստներն են—105 սպանւած, 118 վիրաւոր և 2193 գերի ընկածներ։

—Թէև Փիլիպպեան կղզիների ապստամբների զարգացումը Սպէինացիզմ դէ դերի ընկաւ, սակայն Փիլիպպեցիք անմիջապէս ընտրեցին նրա յաջորդ և շարունակում են պատերազմը։ Նրանք գէնքը վայր չեն դնիլ, մինչև չըստանան լիակատար ինքնավարութիւն, Ամերիկայի գերիշխանութեան տակ։ Փիլիպպեցիք նորերս առաջարկել են իրանց պայմանները։

—„Нов Вр.“ հեռագրում են Վլադովէշչենսկից, որ մանջուրների հողերի վրայ տեղաւորում են ռուս գաղթականներ։

—Պոլսի «Servet» լրագիրը յայտնում է, որ Հալէպի վիլայէթի կլիմայական պայմանները, ուր բնակութիւն են հաստատել Կովկասից գաղթող չերքէզները, վատ են ազդում այդ լեռնաբնակների առողջութեան վրայ և առաջարկում է տէրութեանը տեղ փոխել նրանց բնակավայրը Էրզերումի վիլայէթը, ռուս-տաճկական սահմանի վրայ։

Այլ եւ այլ

Ներկայումս Մոսկւայում գտնուող Պարսկի Բոշիլդի մասին զանազան լուրեր են շրջում ժողովրդի մէջ։ Ինչպէս յայտնում է „Кур.“, անցեալ օրերը Բոշիլդին մօտեցան երկու ցնցոտիներ հագած պարոններ. նրանցից մէկը գիմեց արխի-միլիօնատիրոջ և մաքուր ֆրանսերէն լեզւով յայտնեց իր ջերմագին ցանկութիւնը 25 ր. փոխառութիւն անել։ Երբ Բոշիլդը հարցրեց, թէ ով պէտք է ապահովէ այդ վոխառութիւնը, պատասխան ըստացաւ, թէ իր բարեկամը և ցոյց տւեց իր ընկերին։ Վերջինս, ինչպէս երեւում է, ֆրանսերէն չըգիտէր, նա միայն շարժում էր ոտքերը, աչքերը թարթում և ասում „ուչ“։ Այդ տեսարանը այն աստիճան ոգեւորեց Բոշիլդին, որ նա վճռեց խնդրատուների կամքը կատարել և տւեց նրանց վոխարինաբար 25 ր. տասն տարի ժամանակով։

Ժամանակաւոր խմբագիր՝
Բժիշկ Արտաշես Ջիլեանց
Տպատարակիչ՝ Տ. Նազարեանց